

Գահ: Արքունի տաճարին բազմականը սովորաբար գահ կը կոչուին. ինչպէս՝ «մեծամեծքն յւրաքանչիւր գահոռ» (Փաւս. 67): Վարդան կ'ըսէր իւր զինակցաց՝ թէ ոմանք քան զինք «գահոռ ի վեր (էին) ըստ հայրենի պատուոյն» (Եղիշ. 85): Եւ «զգահն երկրորդական» կ'անուանէ Խորենացին բարձր իշխանի մը բազմականը (124): Նոյն բառն է տիկնանց «բարձրագահք» բարդին մէջ ալ (աստ, 52): Միջին դարուն զայս փոխանակեց գահոյքը, որ հին ժամանակ թագաւորին միայն սեպհական էր (աստ, 54): — Գահ՝ կը ծագի պրս. մի եւ նոյն բառէն եւ հոմանշէն (Հիւբշ. 125):

---